



ՀՀ, Երևան 0010, Կառավարական 3-րդ մասնաշենք,  
Հայաստան համահայկական հիմնադրամ  
Հասարակութեան հետ կապերու բաժին  
Հեռ: + (374 10) 521505  
[pr@himmadram.org](mailto:pr@himmadram.org)  
[www.himmadram.org](http://www.himmadram.org)

## Մամուլի հաղորդագրություն

### "Հեռուստամարաթոն 2009" ազգային տուրքի ընդգրկած ծիրէն ներս Մոսկուայի մէջ կայացաւ ճաշկերոյթ՝ կազմակերպուած բարեգործական նպատակով

**Երևան, 27 հոկտեմբեր, 2009 թ.:** Սոյն թուականի հոկտեմբեր 25-ին Հայաստանի Հանրապետութեան Նախագահ, "Հայաստան" համահայկական հիմնադրամի հոգաբարձուներու խորհուրդի նախագահ Սերժ Սարգսեանի հրաւերով ամէն տարի իրականացուող հեռուստամարաթոնի, ազգային տուրքի ընդգրկած ծիրէն ներս Մոսկուայի "Արարատ Փարք Հայթ" հիւրանոցին մէջ կայացաւ դրամահաւաքի նպատակով կազմակերպուած բարեգործական ճաշկերոյթ, որուն մասնակցեցան ռուսաստանաբնակ հայազգի մոտ 80 գործարար:

Ճաշկերոյթին ներկայ էին նաեւ հիմնադրամի հոգաբարձուներու խորհուրդի անդամներ՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Բակո Սահակեանը, Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Յովիկ Աբրահամեանը եւ "Հայաստան" համահայկական հիմնադրամի գործադիր տնօրէն Արա Վարդանեանը:

Կայացած ճաշկերոյթի ընթացքին հանգանակուած դրամական միջոցները պիտի ծառայեն Շուշիի զարգացման եւ բարգաւաճման համար նախատեսուած ծրագրերի իրականացմանը: Հանդիսութեան մասնակից մեր հայրենակիցներուն դիմելով՝ Սերժ Սարգսեանը իր խօսքին մէջ նշեց.

"...Բոլորիս արդէն յայտնի է, որ "Հայաստան" համահայկական հիմնադրամը սկսած է կազմակերպել եւ իրականացնել ամէն տարի մեծ ջանասիրութեամբ եւ ոգեւորութեամբ ձեռնարկած համահայկական դրամահաւաքի աշխատանքները, որ բազմիցս, ճշգրիտ բնութագրմամբ, կոչուած է նաեւ "ազգային տուրք": Այս անգամ կը նախատեսուի կատարուած հանգանակութեան էական մասը տրամադրել Շուշիի ենթակառուցուածքներուն եւ տարբեր հասարակական հաստատութիւններու մասնաճիւղերուն վերականգնման համար նախագծուած ծրագրերու իրականացման, ուստի ան պիտի ծառայէ Շուշիի զարգացման, բարեկարգման եւ բարգաւաճման համազգային նպատակին: Այն Շուշիին, որ եղած է Արեւելեան Հայաստանի կրթական եւ մշակութային բարձրակարգ կեդրոններէն մին, այն Շուշիին, որ միշտ է՝ ր եւ այժմ է՝ մեր ազգային հպարտութեան յորդառատ աղբիւրներէն մին. այսօր ան

«Հայաստան» համահայկական հիմնադրամը շահոյթ չհետապնդող կազմակերպութիւն է, որը հիմնադրուած է 1992թ-ին, որուն նպատակն է խթանել մարդասիրական գործունեութիւնը եւ տարբեր հաստատութիւններու եւ կառոյցներու մասնաճիւղերու զարգացումը ՀՀ-եան եւ ԼՂՀ-եան մէջ: Հիմնադրամը ունի 17 տեղական մարմին ամբողջ աշխարհի մէջ:

կարօտ է մեր աջակցութեանը եւ հոգատարութեանը: Աշխարհի մէջ քիչ են այն քաղաքները, որոնք Շուշիի նման պատմութիւն եւ ճակատագիր ունին: Ան իւրայատուկ է եւ կը տարբերի ուրիշ շատ քաղաքներէ իր ունեցած չարչարալից ու դաժան պատմութեամբ: Արեւելեան Հայաստանի շրջանին մէջ որեւէ պատերազմ չէ կատարուած, որուն ընթացքին ծանրակշիռ վնասներ կրած չ'ըլլայ մեր գեղեցիկ բերդաքաղաքը: Բաւարար է քրքրել ու վերյիշել վերջին երկու հարիւր տարուայ պատմութիւնը ու մենք կը տեսնենք որ այս ընթացքին մեր սիրելի քաղաքը նուազագոյնը տասնհինգ անգամ գրաւուած, թալանուած ու աւերուած է տարբեր իշխանաւորներու կողմէ, իրենց ազահութեան յագուրդ տալու փափաքով: Այս ճակատագիրը եւ Շուշիի ապրելու եւ գոյատեւելու յամառութիւնը զայն կը դարձնէ տասնապատիկ աւելի թանկ ու արժէքաւոր հայութեան համար:

Ես կը հրաւիրեմ մեր հայազգի գործարարներուն եւ ձեռներէցներուն շոայլօրէն մասնակցելու համահայկական հնչեղութիւն ունեցող այս նախաձեռնութեան եւ իրենց լուման ներդնելու ազգանուէր ու ազգաշէն գործին, ինչը դարեր շարունակ եղած է մեր բարերարներուն եւ մեկենասներուն կարեւորագոյն եւ ընդօրինակելի առանձնայատկութիւններէն մին: Մենք ինչ որ տանք եւ որքան ալ շատ տանք, պիտի չկրնանք հաւասարիլ իրենց արիւնը տուած, իրենց կեանքը զոհած ազատամարտիկներուն, իրենց զաւակները կորսնցուցած մայրերուն, որոնք վճարեցին ամենաբարձր գինը Շուշին մեզի վերադարձնելու համար: Փորձենք արժանի ըլլալ անոնց կատարած սուրբ գործին ու շարունակենք այն՝ շէնացնելով եւ զարգացնելով մեր հայրենիքը:

Մենք շատ ենք եւ մենք հզօր, կորովի եւ դիմացկուն ենք մեր պզտիկներով, պատանիներով, երիտասարդներով ու մեծահասակներով, մեր աշխարհասփիւռ հայութեամբ, մեր հայրենասէր ու հայրենակարօտ այն բոլոր հայորդիներով, ովքեր այս պահուն բառիս իսկական նշանակութեամբ կը գտնուին ժայտերու մէջ եւ անդուլ կ'աշխատին վերանորոգելու համար Արփա-Մեւան փապուղին (թիւնէլ) կարելի եղածին չափ շուտ Մեւանին ջուր հասցնելու համար, ովքեր հեռաւոր Արժանդինի մէջ հայկական պար կը սորվեցնեն հայ պզտիկներուն, որովհետեւ հաւատացած են Կոմիտաս վարդապետի այն խօսքերուն, թէ "ազգային դաստիարակութեան ամենահզօր զէնքը հայկական պարն է", ովքեր այժմ զէնքը շալկած կը հսկեն մեր ժողովուրդի խաղաղութիւնը եւ պատրաստ են իրենց կեանքի գնով պաշտպանելու հայրենիքի սահմանները թշնամիներու խժոժութիւններէն, ովքեր Ցեղասպանութեան ցաւը եւ արդարութեան խօսքը չեն կրնար այլ կերպ բարձրացայնել ու հնչեցնել, քան օտար լեզուով եւ ոօք երաժշտութեան միջոցով, որովհետեւ անհնար է աւելի բարձր ճչալ ու աղաղակել, ովքեր Թուրքիոյ մէջ կը հրատարակեն հայերէն եւ թրքերէն թերթ, որ կարելիութիւն ունենան ըսելու եւ բոլորին փոխանցելու իրենց հոգիին ազատ խօսքը, որ երբեմն նահատակութեան հաւասար արարք է, ովքեր երկար տարիներու անխոնջ գործունէութենէ ետք չեն յոգնած եւ չեն յուսահատած շատ երկիրներու հասարակութիւններու բոլոր շերտերուն եւ յատկապէս պաշտօնէաներուն ու բարձրաստիճան անձանց բացատրելէ ու պարզաբանելէ, որ մենք ծարաւ ենք ու կարօտ արդարութեան, ովքեր Լիբանանի մէջ հայկական դպրոցներ կը նորոգեն

«Հայաստան» համահայկական հիմնադրամը շահոյթ չհետապնդող կազմակերպութիւն է, որը հիմնադրուած է 1992թ-ին, որուն նպատակն է խթանել մարդասիրական գործունէութիւնը եւ տարբեր հաստատութիւններու եւ կառոյցներու մասնաճիւղերու զարգացումը ԶԳ-եան եւ ԼԳԳ-եան մէջ: Հիմնադրամը ունի 17 տեղական մարմին ամբողջ աշխարհի մէջ: - 2 -

պատերազմական գործողություններու դադարման յաջորդ օրը:

Մենք ուժեղ ենք այն դեռահաս տղաներով ու աղջիկներով, ովքեր նստած կը զանգահարեն բոլորին, առանձին-առանձին, մէկիկ-մէկիկ, որ Արցախի համար փող հանգանակեն: Զօրեղ ենք բոլոր այն հայորդիներով, անոնք ըլլան քարակոփ, մեկենաս, թէ ճարտարապետ, ովքեր այս պահուն կ'աշխատին ու կը կառուցեն մատենադարանի նոր շէնք Երեւանի մէջ կամ հիւանդանոց՝ Արցախի մէջ: Անոնցմով, ովքեր Ամերիկայի, Հնդկաստանի, Աւստրալիոյ մէջ, ինչպէս եւ այն բոլոր երկիրներուն մէջ ուր կ'ապրի ու կը գործէ հայը, կը մատուցեն հայկական պատարագ ամէն կիրակի օր: Կորովի ենք անոնցմով, ովքեր համաձայն չեն Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւններուն որդեգրած քաղաքականութենէն, նաեւ այն հայորդիներով, ովքեր համաձայն են որդեգրուած ընթացքէն: Մենք հպարտ ենք եւ հոգեպէս հարուստ այն հայորդիներով, ովքեր մարմնով ներկայ չեն, սակայն անոնք մշտապէս ներկայ են մեր հոգեւոր կեանքին մէջ, իրենց ունեցած հարուստ ներդրումով մեր մշակութային, գիտական ու քաղաքական կեանքին մէջ: Անոնք մեր ուսուցիչներն են, մեր մեծերը, ովքեր մեզի՝ այսօրուայ սերունդներուն կտակեցին հարուստ քաղաքակրթութիւն, հայ ըլլալու հպարտութիւն եւ պարտականութիւն: Մենք հզօր ենք բոլոր հայորդիներով, ողջ հայութեամբ”:

Դրամահաւաքի նպատակով կազմակերպուած բարեգործական ճաշկերոյթի ընթացքին նուիրատութիւն կատարած անձանց անունները եւ հանգանակութեան արդիւնքները "Հայաստան" համահայկական հիմնադրամը պիտի հրապարակէ հետուստամարաթօնին օրը՝ նոյեմբեր 26-ին:

**«Հայաստան» համահայկական հիմնադրամ**  
\* նշել արժիւրը